

ՄԱՍԿ

Տարեկան դիմ 10 րուբլ, կես տարվան 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի նմանատիպ մեջ:

Օտարաբարությունը դիմում են ուղղակի
Դիմումները. Редакция «Маск»

Խմբագրությունը բաց է առաջօրե 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից):

Յայտարարում իմն ընդունվում է ամեն լեզվով:

Յայտարարում թիվների համար վճարում են
խրատանցիկ րախմ 2 կոպեկ:

ԲՈՎԱՆՈՒԿԱՆՈՒԹԻՒՆ

Հայոց և յուրաց խնդիրները:—ՆԵՐՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ: Նամակ վարչապետին:—ԱՐՏԱ-
ՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: «Порядок» ևրդեր թղ-
թակցութիւնը: Նամակ Թիֆլիսից:—ՀԵՌՈՒ-
ԳԻՐՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱ-
ՍԽԱՆԱԿԱՆ: Ներք:

ՀԱՅՈՑ ԵՒ ՅՈՒՆԱՅ ԽՆԴ- ԴԻՐՆԵՐ

Յունաց խնդրի վճռվելուց յե-
տոյ, հայոց խնդրի վճռվելու
հերթը կը գայ, լսում ենք մենք
ամեն կողմից:

Բայց արդեօք հաստատ է
այդ և կարելի է արդեօք յոյս
դնել Եւրոպայի խոստումների
վրա: Արքան տարի է անցել Բեր-
լինի դաշնագրի կայացնելուց յե-
տոյ, և ի՞նչ արաւ Եւրոպան
Թիւրքաց Հայաստանի համար,
—ոչինչ: Բնդհակառակն Թիւր-
քաց հայերը աւելի վատ դրու-
թեան մէջ են այժմ, քան թէ
Բերլինի կոնգրէսից առաջ:

Եւ իրանք Թիւրքաց հայերը
ի՞նչ են անում այժմ որ հայոց
խնդիրը չը մոռացվի յունաց խն-
դրի վճռվելու ժամանակ... Նոյն-
պէս ոչինչ: Եւրանք միմիայն
դանդաղում են իրանց դառն և
անտանելի դրութեան վրա, գան-

գատվում են, որ քիւրդերը և
Թիւրքաց պաշտօնեաները նրանց
հարստահարում են, զանգառ-
վում են որ Թիւրքիան իր սովո-
րական նենգաւոր քաղաքակա-
նութեամբ մի կողմից աւելորդ
հարկեր է պահանջում հայերից,
իսկ միւս կողմից զենաւորում է
քիւրդերին, բնակեցնում է քիւրդ
փախստականներին հայերի տե-
րում, հայերին անընդհատ երկիւ-
ղի մէջ պահելու համար...

Բայց եւրոպական պետու-
թիւններից դարձեալ Նիւլիան է,
որ գոնէ ժամանակ առ ժամա-
նակ յիշում է հայերին, գոնէ
հարցումներ անելով պարլամենտի
մէջ Թիւրքաց հայերի դրութեան
մասին: Մնացած Եւրոպան կար-
ծես արդէն մոռացել է նրանց
գոյութեան մասին:

Արեւելեան խնդրի վերաբերու-
թեամբ Եւրոպան վարվել է եսա-
կան կերպով: Նիւլիան, դեռ Բի-
կոնֆերանսի ժամանակ, իրան ցոյց
տալով արեւելեան քրիստոնեանե-
րի պաշտպան, հէնց որ ստացաւ
այն ինչ որ իր համար հարկաւոր
էր, Կիպրոս կղզին և մի քանի
կէտեր Բոսֆորի վրա, այլ ևս չէր
պնդում Թիւրքիայի քրիստոնեա-
ներին մարդավայել իրաւունքներ

տալու անհրաժեշտութեան վրա:
Եւստրիան մտքից իր գործե-
րը Բանիա և Հերցեգովինա իրր
թէ այդ երկիրները խաղաղացնե-
լու և ժամանակաւորապէս զրա-
ւելու համար, Թիւրքաց բարեա-
րոտութեան դէմ նրան պաշտպա-
նելու դիտաւորութեամբ, իսկ
վերջը կատարելապէս սեփակա-
նացրեց իրան այդ երկիրները:

Այժմ Գերմանիան կամենում
է զեր խաղալ արեւելեան խնդրի
լուծելու մէջ: Եւ նա էլ ի հար-
կէ նոյնպիսի ետեւան նպատակ-
ներ կունենայ, ինչպէս Նիւլիան
և Եւստրիան: Գերմանացիները
անչափ ուրախ են, որ անգլիա-
կան ղեկավար Գոչէն Բերլին է
եկել իշխան Բիսմարկի հետ խոր-
հրդակցելու համար, նրանք սաս-
տիկ գոհ են որ, ինչպէս երևում
է, Եւրոպան Գերմանիային պի-
տի յանձնէ արեւելեան խնդրի
լուծման գործի առաջնորդու-
թիւնը:

Գերմանիան Ֆրանս-գերմանա-
կան պատերազմից յետոյ հասաւ
իր փառքի ամենաբարձր կէտին,
նրան պակաս է միայն մի բան,
այն է զեր խաղալ արեւելքում,
ունենալ մի յենակէտ արեւելքում:
Եւ ահա այժմ իշխան Բիսմարկ,

նոյնքան քիչ հոգալով արեւելեան
քրիստոնեաների վրա, որքան նը-
րանց մասին հոգաց Նիւլիան և
Եւստրիան, կաշխատէ կաշառք
առնել Թիւրքիայից, այսինքն մի
որ և է ծովեզերեայ տեղ, մի նա-
ւահանգիստ սեփականացնել, իսկ
յոյներին ու հայերին կը թողնի
առաջվայ դրութեան մէջ:

Յունաստանը գոնէ ունի իր
անկախութիւնը, նրա համար,
ինչպէս ասում է ռուս «Պորիա-
դօկ» լրագրի Կ. Պօլսի թղթա-
կիցը, մի քանի երկիրների ձեռք
բերելը շուայլու թիւն է:
Իսկ Թիւրքաց հայերը ոչ թէ
սուերորդը, ոչ թէ շուայլութիւն են
պահանջում, բայց ամենաանհրա-
ժեշտը՝ որ և է ինքնավարութիւն,
մի փոքր ի շատէ մարդավայել
կեանքի իրաւունք: Ռուս լրա-
գրի թղթակիցը խօսեցնել է տա-
լիս յոյներն և հայերն և շատ ու-
ղեղ է նկատում որ եթէ հայը
ինքն իր համար ոչինչ չանի, նը-
րան օգնող չի լինի: «Աստուծու
վրա յոյս դիր, ասում է յոյնը
հային, բայց և ինքը թոյլ և
անհոգ մի լինիր»:

Եթէ հայերը չիմանան իրանց
վրա դարձնել ամբողջ Եւրոպայի
ուշադրութիւնը յունաց խնդրի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԱՁ

Գնում էի Նիկոսի փողոցով դէպի ցենզորա-
կան կոմիտեոյ մի քանի տեղիկութիւններ ստա-
նալու համար: Գիտեցի, տաք գարնան օր էր.
անցողաբանների թիւը, ինչպէս սովորաբար,
շատ մեծ էր. միայն ամեն բան երևում էր ինձ
օտարոտի:—Նոյն փողոց, նոյն մարդիկ, բայց
կարծես թէ ամեն բան փոխված լինէր: Անցնող-
ները դէմքի արտայայտութիւնը բոլորովին ու-
րել էր. առաջվայ վարկերտ, ճնշված հայացքների
այլ ևս չէի հանդիպում, մտքումս ասում էի,
«Երեկ այդ ամբողջ բազմութեան ծննդեան
օրն է այսօր, որ այդպէս զուարթ, ուրախ շտա-
պով անցնում են»: Ես ճանապարհս չարեւա-
կում էի, բայց երբեմն այնպիսի խօսակցութիւն-
ներ էին ախանջում անցնում, որ մնում էի չվա-
րած.—որ ցերեկով այդ տեսակ խօսքեր լսել
Նիկոսի փողոցում, դա աներևակայելի բան էր:

Ես ամեն բայէ պատահում էի թէ՛ անհէ և պօ-
ւրիակներ այդ տեսակ խօսող մարդկերանց օ-
ձերից կը բռնի, բայց ի դուր էի սպասում. փո-
ղոցում կանգնածները հանգիստ շարունակում էին
իրանց խօսակցութիւնը, իբր շատ սովորակա-
նաւ: Երեկ պօւրիակներն ուշադրութիւնը
դարձած էր ուրիշ բանի վրա, մտածեցի ես և
աշխատում էի չուտով անցնել այդ փողոցից,
թէպէտ ինչքան էլ այս և այն կողմը նայում
էի, ոչ մի պօւրիակաւ չէի տեսնում իր կապի-
կական հագուստով, զինաւորված ոտքից մինչև
գլուխ.....

Սա ինչ անկարգութիւն է, մտածեցի ես...
—Անցէք, անցէք, պարոններ. խնդրեմ զը-
գոյշ եղէք, փոքրիկ երեխային ոտքի տակ
չը գցէք, լուկեաւ մի մեղմ ձայն և նոյն
բօպէին մէկի ձեռքը մեկնվելով դէպի երեխան,
հեռացրեց նրան անդդույն անցնողից:

Յետ նայեցի. իմ հանդէպ կանգնած էր պօւր-
իակաւ, թէպէտ նա շատ քիչ նմանութիւն ու-
նէր մեր կեանքի այժմեան հաւատարմ ընկե-
րակցու հետ, նա ոչ ոքին օձերից չէր բռնում և
կառապաններին իր զօրեղ թրի հարուածի ազ-
դեցութիւնը զգալ չէր տալիս:

—Եյ, բուրձնիկ, ուր ես:
—Վուր—պօւրիակաւ:

—Միթէ չէք տեսնում, ասաց նա ժպտալով. ինչ
էք կամենում... Եթէ դուք չտապում էք հա-
նել արտասականների ժողովին, դուք պէտք է
գնաք աջ կողմը, աւելացրեց նա նայելով ինձ
վրա, իբր մի գաւառացու: Այսօրվայ ժողովը
շատ հետաքրքիր է լինելու...:

Աչքերս արդիւրով անցայ: Միթէ քնած եմ,
մտածում էի ես:

Հանելով Պատափին, իմ զարմանքը չափ ու-
սանման չունէր.—մի խումբ ցրվողները բարձր
ձայնով, այնպիսի լրագրիների անուններ էին
տալիս, որ մարդու ականջ էին ծակում:

—Տուցե՛ք ինձ «Голосъ», «Новое Время» և
«Молва» գիտեցի նրանց:

Նրանք ինձ վրա այնպէս նայեցին, կարծես
թէ ես լուսնից եմ ընկել:—

—Այդ լրագրիները վաղուց արդէն դադարել
են, պատասխանեց ինձ մի հասակաւոր ցրվող...:

Մենք ունենք այժմ «Реформа», «Либераль», «Ра-
дикаль», «Народникъ», կայ և «Консерваторъ»,
նոյնպէս և «Свобода слова», իսկ եթէ կամե-
նում էք զուարճանալ, գնեցէք «Искра»... Նայե-

ցէք այս կարկիտաւորի վրա... Նման է չէ... Ներ-
քին գործերի միմիայն լաւ են ներկում...
Թէպէտ նա վատ միմիայն չէ, բայց նրա վերջին
կարգադրութիւնը...:

Հտալով մտայ Պատափի խանութներից
մէկի մէջ և սկսեցի քիթս տրտել և հա-
յելու մէջ նայել, մտածելով թէ գոցէ
ցնորվել եմ: Բայց ինձ վրա ոչ ոք ուշադրու-
թիւն չէր դարձնում: Ես կրկին վերադարձայ
Նիկոսի փողոցը հաւատացած լինելով, որ մի
առանձին բան պէտք է պատահի, բայց ի դուր.
առանձին ոչինչ չը պատահեց, փողոցային
կեանքը սովորաբար ետում էր և մինչև անգամ
Ա. Կրանկովի դրաման էր անվրդով հանգիստ
դէմքով: «Բայց ինչպէս կարող է «Голосъ» լրա-
գիրը չը հրատարակվել», մտածեցի ես և դիմեցի
մօտակայ փոքրիկ խանութը, ուր ծախվում են
լրագրիներ:

—Ի՞նչ է հրատարակում այժմ Կրանկովին,
հարցրի ես խանութի տէրին:

—Գուր օր տեղից էք գալիս, նա վաղուց
արդէն «Либераль» է հրատարակում:

Ի՞նչ բաներ եմ լսում ու հրաչնքեր տեսնում,
միթէ այդ բոլորը իրողութիւն է: Գոցէ ես
հարցած եմ... Գնում եմ առաջ և հանդիպում եմ
բարեկամիս,—Սերգէյ Նիկոլաևիչին, որին հինգ
տարի տեսած չէի: Նա գնացած էր Պենե-
զա, այն երկրի կլիմայական պայմանները ու-
սումստիւրելու դիտաւորութեամբ...:

—Ինչ հրաչքով եկաք դուք այստեղ?

—Առանց հրաչքի, ես վաղուց այստեղ եմ...:

—Եւ... առանց երկիւղ կրելու...:

—Ինչու պէտք է երկիւղ կրեմ. զարմացաւ
նա... Գոցէ կարծում էք, որ իմ դատաստու-
թիւնը լսելու շատ ժողովուրդ չի գալ...:

—Ինչ դատաստութիւն, ինչ էք ասում...:

—Բարեկամ, ջիւստասից ի՞նչ չէք գալիս,
միթէ ափիւնները չէք տեսել: Եւ նա սկսեց
բարձր ծիծաղել... Ահա նայեցէք: Այդ ասելով
նա ցոյց տուեց մօտակայ մի տան պատի վրա
կապրած առաջին տառերով տպված ափիւն:

Կարգացի և սարսափեցայ:

—Հը, ինչ է, համաձայն չէք... Լաւ, Լաւ,
այժմ ես դարձված եմ, գնալու եմ արմատական-
ների ժողովը, բայց կը խնդրեմ այցելել ինձ մի
ուրիշ անգամ...:

—Իսկ Նիկոսի ի վանսովիլը... նա դեռ այն-
տեղ է, հարցրի ես ցած ձայնով...:

—Ինչպէս չէ, նա այնտեղ ժողովողական ու-
սումստարանի վարժապետ է...:

—Ուսումստարանի վարժապետ...:

—Այո, ինչու էք զարմանում...:

—Իսկ Կարմիր ձորեղ է...:

—Նա կառավարիչ է բնկերական սկզբունքի
վրա հիմնված մի ֆարքիւրի, Վարօսեթի նա-
հանգում...:

—Ինկերական... ֆարքիւրի...:

—Ի՞նչ էք իմ ամեն ասածների վրա զարմա-
նում. չը լինի թէ այդ բաները ձեզ դուր չեն
գալիս...:

Բայց ես բարեկամիս արդէն միտաւ բարեկամելով
հեռացայ նրանից, քայլերս ուղղելով դէպի Թատ-
րոնական հրապարակը: Բարձրացայ ինձ լաւ
ծանօթ սանդուղտներով, մտնում եմ և հանդի-
պում եմ դռնապանին:

—Ինչ էք կամենում, դիմեց նա ինձ:

—Ցնդողական կոմիտեան եմ ուղղում գնալ:

—Ի՞նչ ցնդողական կոմիտեան. դա էլ վա-
ղուց չը կայ: Այո, պարոն, շատ ժամանակից նա
ոչնչացած է:

—Ծաղրում էք ինձ, ինչ է...:

—Ինչպէս կարելի է պարոն. ես փառք Աս-

(- 1780 -)

բայց կը բաւականանամ մէկի վրա մասնա-
ցոյց լինելով: Թիւրքաց ծառայութեան մէջ
եղած մի հայ է Գէորգիւս և նրա կնոջ մէջ
ընտանեկան մեծ փոթորիկ է պատահել
այն պատճառով, որ մարդը անցեալ տար-
վայ վերջերեւ, իր հրամանատար փաշայի
օրինակին հետեւելով, ստորագրել էր մի բո-
ղոքադիր, որ ուղղած էր եւրոպական մաս-
նաժողովից կազմած օրգանական կանոնա-
դրութեան դէմ Թիւրքիայի եւրոպական նա-
հանգիսի համար: Նա անձնականապէս ծա-
նաչում եւ մի այլ հայ տիկնոջ, որ իր
կողմէ հետ կտրել էր ամեն տեսակ կապեր,
որովհետեւ նա հաւատարիմ մնաց Թիւրք
աստիճանաւորի և սուլթանի ծառայի պար-
տականութեանը:

Յոյները, հիմնովով իրանց անկախ դրու-
թեան վրա, որ նրանք ձեռք են բերել առե-
տի շնորհիւ և քաղաքականապէս աւելի
հասունացած ժողովուրդ լինելով, ամեն
դէպքից օգուտ են քաղում խրատելու հա-
մար նրանց, որոնք քիչ զարգացած են և
անկործն ժամանակակից անցքերը գնահա-
տելու համար: Օրինակ կը բերեմ մի յոյնի
խօսակցութիւնը հայի հետ այն անցքերի
մասին, որոնք կարող են պատահել գար-
նանը, եթէ մի ընդհանուր կռիւ պատահի
Թիւրքիայի, նրա հպատակ և զրացի բրիտ-
տանեաների մէջ:

Յոյն Աբրո, դու լսել ես, որ Թիւրքիան
մտադիր է արտաքսել և Պոլսից բոլոր յոյ-
ներին, եթէ նա պատերազմ սկսի Յունաս-
տանի հետ:

Հայ. Միթէ դա նորութիւն է: Միայն
հետաքրքիր է իմանալ, թէ ինչ կը պա-
տահի մեզ հետ, հայերիս հետ, քանի որ
և Պոլսի մէջ մենք կը մնանք միակ ատելի
գետերն են Թիւրքերի համար: Այն ժամա-
նակ մեր դրութիւնը մայրաքաղաքի մէջ
աւելի լաւ չի լինի, քան թէ մեր ցեղա-
կիցների դրութիւնը Հայաստանի մէջ:

Յոյն Աստուած տայ: Այն ժամանակ
դուք խելքի կը դաք, կը հաւաքեք ձեր
կայքը և կողերովէք հայրենիք, որի մա-
սին միայն ակն էք քաշում և մի և նոյն
ժամանակ վայելում էք և Պոլսի յարմա-
րութիւնները: Զէ, Աբրո, հայրենիքը այդ-
պէս չէ կարելի սիրել:

Հայ. չձմարիտ է, բայց դու մոռանում ես,
որ մենք, հայերս, և դուք բողոքովն տարբեր
պայմաններով ենք շրջապատված. յոյները
անկախ են և այժմ ձգտում են շոյալուծեա-
նը՝ ընդարձակել այդ անկախութիւնը, իսկ
մենք ոչինչ չունենք և ձգտում ենք Թիւր-
քիայից որ և է ինքնավարութիւն ստանալ,
որ կարելի է ձեռք բերել առանց զենքի
օգնութեանը զիմելու, այլ եւրոպայի բա-
րոյական ճնշման շնորհիւ:

Յոյն. Տեսնում եմ, որ դուք լաւ չէք
ճանաչում Թիւրքիային. Կուրք, հայերդ,
կարծում էք, որ Թիւրքիան խելքի կը գայ,
եթէ նրանից նոր երկիրներ խլեն: Կտրեցեք
մինչև անգամ նրա եղունգները, այնու ամե-
նայնիս կամաւորապէս նա ձեզ ոչինչ չի
տայ: Միթէ քիչ խրատվեցաւ Թիւրքիան,
բայց երբ է զինուորն արել խելքի և խղճ-
մտանքի պահանջներին: Միթէ դուք կար-
ծում էք, որ Յունաստանի հետ իր հաշիւ-
ները վերջացնելուց յետոյ Թիւրքիան ուղադ-
րութիւն կը դարձնի Փոքր-Ասիայի հայե-
րի դրութեան վրա: Ոչ: Մեզ հետ իր գոր-
ծը վերջացնելուց յետոյ, նա կաշխատէ բո-
լոր միջոցներով, որոնց հնարքները մէջ նա
ճարտար է, բնաշինչ անել հայերին: Այն
ժամանակ ի՞նչ պէտք է անէք: Նորից կը
բողբե՞ք: Բայց ինչ նշանակութիւն ունեն
բողբելը: Բոսնիան և Հերցեգովինան շատ

բողբեցին Աւստրիայի բռնութիւնների դէմ,
բայց ո՞վ նրանց վրա ուղադրութիւն դարձ-
րեց: Այդ բողբեցիները ձանձրացրին Եւրո-
պային: Զէ, Աբրո, ձեզ միայն մի բան է
մնում. մեզ հետ միասին աւելի նպատակա-
յարմար միջոցների գիմել, որոնցից կախ-
ված են ձեր ազատութիւնը և ապագան...
Հայ. Բայց ի՞նչպէս անենք, քանի որ
մեր ժողովուրդը զենք չունի և զենք անց-
կացնելու ճանապարհ էլ չը կայ: Թիւրքիան
հայերի վրա այժմ աւելի խստութեամբ է
հսկում, քան թէ ուրիշների վրա:

Յոյն. Իսկ Ռուսաստանը, Կովկասը:

Հայ. Ոչ, դա միջազգային իրաւունքնե-
րին հակառակ կը լինի, այդ բանը Ռուսաս-
տանը թոյլ չի տայ:

Յոյն. Թիւրքիան ի՞նչ միջազգային կա-
նոն է պահպանել Ռուսաստանի վերաբե-
րութեամբ, որ Ռուսաստանը այժմ պար-
տաւորված լինի նոյնպէս վարվել: Միթէ
դու մոռանում ես այն սարսափելի խառնա-
կութիւնը, որ 1866 թ. Թիւրքիան զցեց
իր հպատակ հայերի մէջ, գիտեմք լուր
տարածելով, իբր թէ ռուսները Եւրոպայի
ձեր կաթողիկոսին շղթայակալ բանտը ձգե-
ցին: Միթէ Թիւրքիան չէր հասկանում այն
անկարգութեան նշանակութիւնը, որ նա
կատարեց Ռուսաստանի վերաբերութեամբ,
զինաւորելով երկու միլիոն ազգաբնակու-
թիւնը մի դրացու դէմ, որի մօտ հայերը
աւելի լաւ դրութեան մէջ էին:

Հայ. Այո, ձմարիտ ես ասում: Տեսնե՞ք
Աստուած ինչ կը տայ:

Յոյն. Աստուծոց յոյսը մի կտրիր, բայց
ինքդ էլ պարսպ մի մնար: Գարունը շատ
հեռու է:

Այսպէս են տրամադրված յոյները թէ
Թիւրքիայի և թէ իրանց հետ միատեսակ
շահեր ունեցող ազգութիւնների վերաբե-
րութեամբ: Նա հարկաւոր համարեցի մէջ
բերել այս խօսակցութիւնը այն պատճառով,
որ այժմ օրակարգի են անցել երկու գլխա-
ւոր հարցեր, որոնք եւրոպական միջամու-
թեան կարօտ են և որոնք Թիւրքիայի թոյլ
կողմերն են կազմում:

Քանի որ մտքերը այսպէս յուզված են,
սուլթանը բոլոր շահերը գործ է դնում,
որ և Պոլսի մէջ կօնֆերենցիա կազմվի,
բայց այդ գործը երկարում է և անաջողու-
թիւնների է հանդիպում: Պատմում են, որ
նորերում երբ սուլթանը հարցրեց գերմա-
նական հաւատարմատար կոմս Բաթլին-
սկուն, թէ երբ կը վերադառնայ կոմս Հա-
ֆելդ, հաւատարմատարը զարմացրեց նրան,
պատասխանելով, թէ Հաֆելդը մի ամիս
յետոյ կը վերադառնայ և Պոլսից Մի և
նոյն ժամանակ Թիւրքիան ամեն մի թույլ
ստիպված է զոհաբերութիւններ անել զի-
նաւորվելու համար:

Ռուսիին փոս փորելու առածը չափազանց
սազում է Թիւրքիային, որ ալբանական մի-
ութիւն պատրաստեց Չերնօգորիայի և Յու-
նաստանի պահանջներին ընդդիմադրելու
համար և որ այժմ Թիւրքիայի հակառակ
է և կատարեալ ինքնավարութիւն է պա-
հանջում: Մի և նոյն ձեռքով Թիւրքիան պա-
րաստեց քերական միութիւնը, կամ
աւելի լաւ է ասել քերական հրոսակները
հայոց ձգտումները անգոր դարձնելու հա-
մար և այժմ և Պոլսի մէջ լուրեր են ստաց-
վում, որ շէյխ Իբրահիմը հարսնան սկզ-
բից գիտաւորութիւն ունի չենթարկվի
Թիւրքաց մեծ վիզիրի հրահանգներին: Թիւր-
քաց «Ջերիդէ» շահադիս՝ լրագրի խօսքե-
րի համեմատ, ի նկատի ունենալով այդ
հանգամանքը պարսկական սահմանները
(հասկացիր շէյխ Իբրահիմը մօտ) կու-

ղեկովի սուլթանի հաւատարմատար և ծար-
պիկ մարդ Հայդար-փաշա, որպէս զի վերջ
դնէ անկարգութիւններին Թիւրք-պարսկա-
կան սահմանների վրա: Ի՞նչ կը նշանակի
վերջ դնել անկարգութիւններին, եթէ ոչ այն, որ Թիւրքաց կառավարու-
թիւնը դուրս յայտ եկն Իբրահիմը հիւս-
նալու զանգուծեան վրա: Թիւրքիայի ուղացած այդ
հոգատարութեան պատճառներն են մի կող-
մից շէյխ Իբրահիմը ձգտումները դու-
րեց բողոքովն անկախ, իր սեփական նպա-
տակների համար, որոնք միատեսակ թշնա-
մական են թէ Թիւրքիայի և թէ Պարս-
կաստանի համար, միւս կողմից այն ուղա-
դրութիւնը, որ դարձնում է Ռուսաստանը
քիւրդերի շարժումների վրա իր սահմանների
մօտ:

«Վալիթ» լրագրի այսօր մի նոր գիւտ
է արել. «Այս, բացականչում է նա իր ա-
ռաջնորդող յօդուածի մէջ, Թիւրքիան հեշ-
տութեամբ կը յաղկէր իր ներքին և ար-
տաքին թշնամիներին, եթէ նա փող ու-
նենար»: Ի նկատի առնելով իր նոր գիւ-
տը, «Վալիթ» առաջարկում է երեք տար-
վայ կալուածական հարկերը ուժով սկզբից
հաւաքել, որ 3 1/2 միլիոն Թիւրքաց լրա-
գումար կը լինի: Եթէ աւելացնենք դրա
վրա երեք անգամ աւելի մեծ գումարը, որ
կը մտնի փաշաների զբաղման հարկերը հա-
ւաքելու ժամանակ, կարելի կը լինի երեւ-
կայել մի ազգաբնակչութեան դրութիւնը,
որ երկու տարի շարունակ Փոքր-Ասիայի մէջ
տանջվում է սովից:

ՆԱՍՏԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՑ

Ալաշկերտ, 24 յունիս 1881

Մի շաբաթ յառաջ՝ Վանից Ալեքսանդրաբոլ
վերադարձող երկու հայ երիտասարդներ (Սինե-
քերիմ Սաֆարեան և Յակոբ Մամիկոնեան) կա-
լանաւորուեցան Ղարաբլինայի դպրագոյնից,
իբր թէ դրանք ռուսահայերից զրկուած քրտե-
սներ լինէին: Բարեբաղդաբար, նրանց վրա ոչինչ
չը գտնվեցաւ որ այդ կախածը հաստատէր: Դա-
մադարը նրանց ուղարկեց Ալաշկերտ միութե-
սարքի փաշայի մօտ, այստեղից էլ ուղարկվե-
ցան Բայազիդ որ սահմանից դուրս հանվին:

Ալաշկերտ գաւառի Նաւիկ անուն գիւղի մէջ
(այժմ լոկ քրդաբնակ, բայց երբեմն լոկ հայա-
բնակ էր), վերջին 3—4 տարիներում քրդաց մի
նոր շէյխ է յայտնվել, շէյխ Խալիֆա անուն:
Այս սուլթը՝ 4 ամիս է որ երեւին թանձր քոչ
մը ծածկած (հայի երես չը տեսնելու համար) և
իր առաջից 20 աշակերտներ թողած, որոնք ո-
տով են գնում, պտոյտ է անում ամեն մի ան-
ձին, քարովելով սրբազան պատերազմ հայր դէմ:
Այս նպատակով, 10 որ առաջ հրամայել էր իր
հաւատացեալ ժողովրդին 7 որ ծոմ պահել որ
սրբուհին նուիրական օրվա համար... Միւս կող-
մից, շէյխ Իբրահիմը համակ է ուղարկել
այստեղ, որով հրամայվում է, իբր թէ, հայերին
չը վնասել և նրանց քրդերին բարեկամ համա-
բել: Այս հաստատում են ամեն քրդեր և մեր-
ժում են Խալիֆայի մասին խօսվածները, իբր
սուտ լուրեր, թէ ևս ինքը 4 որ յառաջ ակա-
նատես եղել եմ որ նոյն շէյխ Խալիֆան պա-
տուական արաբ նժույզի վրա հիւժած, երեսը
թանձր քոչով ծածկած, առաջն էլ ունենալով
20 հատ ֆախիներ, որոնք երգելով, խանչալ
խաղցնելով, թռչկոտելով, խորը նստած ձիւնը
ձեղքելով անցան գնացին Համադ գիւղէն Ալաշ-
կերտ, միւթնաբարձր փաշային ներկայանալու
և խորհրդակցելու համար: Առաջադրով ամբողջ
քրդաբնակութիւնը շարժվում է պատրաստվելու
մէջ է... Միւս կողմից էլ, փաշան 4—5 ամիս է
որ անդադար պտուտելով իր մէթնաբարձրութեան
մէջ ամեն տեսակ բռնութիւններ գործ է դնում
հարկեր ժողովելու համար. հին տարիներէ ան-
վճար մնացած տուրքերը և նոր 4—5 տարվայ
տուրքերը այժմէն կանխիկ ժողովելու համար
ցրուած է ամեն մի գիւղ տասնաւոր զապտիա-
ներ, որոնք ծնծ, բանտ և բռնի զորութիւն գոր-
ծածելով, ամօթի, տկուր ու անպաշտպան ժողո-

ւորից վերջին կտոր հացը խլում և խալաւ ոչն-
չացնում են հայ ազգաբնակչութեան կենսական
ոյժը: Այստեղի առաջնորդ Յովհաննէս վարդա-
պետը կորցրել է իր աղքեցութիւնը Թիւրքաց
կառավարութեան մօտ և չէ կարող օգնել զիւ-
ղացիներին: Ալաշկերտի և Ղարաբլինայի կա-
ռավարական մէջլիսները նստող հայ անդամնե-
րից մի քանիսին վրա անախարժ լուրեր են
պտուտում որ իբր թէ նոքա երգուեալ թշնամի
են վերջին ժամանակվայ հայութեան շարժմանը
և մատնութիւններ են անում... Իսկ ինչ որ
վերաբերվում է հայ ժողովրդի նեւթական և
բարոյական կացութեան մասին, այդ հանգա-
մանքի վրա շատ բան կարելի էր ասել, բայց
խիստ երկար չը լինելու համար՝ բաւական եմ
համարում ասել որ սովը չէ վերադաշել. թէպէտ
հաց ունեցող շատեր կան և թէպէտ սովից միու-
նողներ չը կան, բայց և այնպէս մուրացկանու-
թեամբ ապրող, օրվայ հացի կարօտ հարկւրաւոր
ընտանիքներ ամեն գաւառի մէջ կան: Գլխա-
ւոր պատճառն է անցեալ տարվայ օգոստոս ամ-
սի ցուրտերը, որոնք մի երկու օրվայ մէջ մրսաց-
րին ցանքերը և այսպիսով խեղճերի վերջի յոյսը
անհետացաւ իրանց աչքերի առաջ: Յոյները
դրած էին մեր ողորմածութիւն վեհափառ Հայ-
րապետի օգնութեան վրա, որի մօտ գտնուած
17,000 միլիոն հիւսն անմոռանալի է մնացել
զաղթականների համար: Եւ ահա մի ամիս սրա-
նից առաջ՝ զիւղացիք լսել են թէ երեւանայ ա-
ռաջնորդ Կարապետ Ալաշկերտ վարդապետը
900 մանէթ է բերել կարօտեալներին ցրուելու
համար (ոմանք կարծում էին թէ 900ը սխալ է,
9000 պէտք է լինի): Եւ ձմարիտ, նա եկաւ,
բայց ինչ ստացաւ ժողովուրդը. հարցրեք առաջ-
նորդ Յովհաննէս վարդապետից, հարցրեք սովե-
րոց տեսուչ Սիսակ Գուլումեանից և նոյն իսկ
կարօտեալներից, ձեր ստացած պատասխանը կը
լինի՝ ոչինչ կամ քրեթէ ոչինչ: Գիւղ էլ կայ որ մի
փարա էլ չի ստացել, զիւղ էլ կայ որ ամբողջ
զիւղացիներին միատեղ 3—4 մէծիւղէ ոսկի է
արվել միայն, բայց այս վերջինները այնքան
սակաւաթիւ են որ նշանակութիւն չէ կարող
ունենալ: Ի՞նչ անէ խեղճ, սոված ժողովուրդը
այդքանով: Ասում են որ վեհափառ Կաթողի-
կոսը 900 մանէթից մի մասն էլ տուել է Կա-
րապետ վարդապետին ճանապարհածախքի հա-
մար:

Այստեղ ժողովրդի բարոյական դրութիւնը
շատ ողբալի է, այս բառի բուն նշանակու-
թեամբ: Ստույգ ժողովուրդների ունեցած ամեն
տեսակ աղտերը կարող էք գտնել այստեղ. բայց
չը նայելով այդ վերին աստիճանի ստրկացած
ոգուց տեղ լինելուն, սուք զարձեալ մտածում
են և շատեր գիշերները անքուն են լուսացնում
իրանց ազատութիւնը ձեռք բերելու յոյսերով:
Ամեն մի լրագիր, մանաւանդ «Մշակը», հե-
ռուից եկող ամեն մի մարդ, հրեշտակի պէս են
ընդունում այս կողմերը, այն ակնկալութիւնով
թէ արդեօք երբ կը լինի մի ազատութեամբ... Ա-
մեն օր սպասում են այդ կողմի հայերի ցաւա-
կութեան և ձեռնադրութեան: Շատ համբաւներ
տարածվել են այստեղ, բայց ևս չեմ ուզում գրել,
ես ինքս էլ չը գիտեմ թէ որքան ձմարիտ են:
Ահա 5 ամիս է որ այս կողմերում եմ, կարված
լինելով զրեթէ ամեն հաղորդակցութիւնից: Նե-
րկեք նամակիս թերութիւններին. հաւատացե՛ք
որ այս կտոր թուղթին էլ հազիւ գտել եմ այն
զիւղի մէջ, ուր մնում եմ այժմ:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Մ Ի Զ Ա Զ Գ Ա Յ Ի Ն Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ե Ն Ի Ց

Ս. ՊԵՏԵՐՈՒԹՅԱՆ, 16 փետրվարի: Պետական
բանկի 5% տոմսակը առաջին շրջանի 95
ր. 75 կ., երկրորդ 93 ր. 12 կ., երրորդ
93 ր. 75 կ., չորրորդ 93 ր. 25 կ., ներքին
առաջին 5% փոխառութեան տոմսակը
224 ր. 50 կ., երկրորդ 222 ր., արեւելեան
առաջին 92 ր. 75 կ., երկրորդ 92 ր. 62
կ., երրորդ 92 ր. 25 կ., ոսկի 79 կ.:
Ռուսաց մի ր. լօնդոնի վրա 25.12 պէնս,
ռուսաց 100 ր. Համբուրգի վրա 214
մարկ, 50 պֆ.: Բօրսայի արամադրութիւնը
հանդարտ է:

Խաղաղութիւն—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

